

ԳԵՐ. Տ. ՍՈՒՐԵՆ ԵՊՍ. ՔԷՄՀԱՃԵԱՆ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ ԿԸ ՍՏԱՆԱՅ

Սուրբ Արթուրյա Տնօրէն ժողովը նկատի ունենալով Միաբանութեան երիցագոյն անդամ Գեր. Տ. Սուրեն Նպիսկոպոսի անձնային ծառայութիւնը Ս. Արթուրյա աւելի քան յիսուն տարիներէ ի վեր, եւ նկատի ունենալով իր այժմու բարձր դիրքը եւ պատշոնը իբրեւ Ընդհանուր Վարիչ Գործոց Ս. Արթուրյ, եւ նկատի ունենալով իր անձնական արժանաւորութիւնը, խնդրանք մատուցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին որպէսզի շնորհէ անոր Արժուրեան պատիւ: Վեհափառ Հայրապետը շնորհեց անոր Արժուրեան տիտղոս Դեկտ. 29 թուակիր հեռագրով, ուր կը հաղորդուէր որ կոնգակը շուտով կը զրկուի:

Յունուար 2ի երեկոյին Միաբանութիւնը պաշտօնական շուրջ հրաւիրուեցաւ ուր Լուսարարապետ Գեր. Տ. Շնորհք Նպս. ուրախութեամբ հաղորդեց բարի լուրը անդրադառնալով ամենքին սիրելի Սուրեն Սրբազանի Արթուրեան բազմամեայ ծառայութեան եւ ի դիմաց ամբողջ Միաբանութեան արագինս շնորհաւորեց զայն ու մաղթեց երկար տարիներու առողջ եւ առողջ ծառայութիւն Ս. Արթուրին:

Այս առիթը կ'օգտագործենք շալու համար Գեր. Տ. Սուրեն Արեւիսկոպոսի կենսագրականը իր շատ ընդհանուր գիծերուն մէջ: — Ծնած է 1884ին Սրամպուլ: Իր նախնական կրթութեան զուգահեռ հետեւած է յատկապէս շարականագիտութեան, ծիսագիտութեան եւ հայկական ձայնագրութեան:

1907ին կուգայ Երուսաղէմ եւ կ'արձանագրուի Միաբան Ս. Արթուրյ: 1909ին կը ձեռնադրուի առաջ սարկաւագ ձեռամբ Տ. Յարութիւն Պատրիարքի: Մինչեւ 1918 որպէս սարկաւագ եւ դպրապետ կը ծառայէ Սուրբ Տեղեաց մէջ եւ ի Սուրբ Յակոբ:

1918ին կը ձեռնադրուի կուսակից Բանայ, ձեռամբ Տ. Մկրտիչ Արեւպս. Աղաւնունի, Ս. Գրեգորեանին առջեւ: 1918-1921 ժամասաց եւ դասապետ ի Ս. Յակոբ:

1922ին կը ստանայ Վարդապետական աստիճան, ձեռամբ Տ. Նիկիթէ Դուրեան Պատրիարքի, ինչպէս նաեւ ծաղկեայ փիլոն կրեւու արտօնութիւն:

1922-1926 կը ճշտակուի Հոգեւոր Տեսուչ Պէյրութի Ս. Նշան Եկեղեցւոյ, միանգամայն վարելով Պատրիարքական Փոխանորդի պատշոնը: Ի Պէյրութ նախաձեռնարկ կ'ըլլայ ազգային երկսեռ վարժարաններու հաստատման: 1928ին, հիմնադիրներէն մին կը հանդիսանայ Մարտիրոսի Ազգային Բուժարանին: 1928-1929 կը վարէ Պատրիարքական Փոխանորդի պատշոն ի Դամասկոս: 1927ին կը ստանայ լանջախաչ կրեւու արտօնութիւն:

1929ին, երբ Ս. Արթուր Դամասկոսի թեմը կը յանձնէ Կիլիկիոյ Կարողիկոսութեան, Հոգ. Տ. Սուրեն Վրդ. կը վերադառնայ Ս. Արթուր, եւ կը լծուի վանական ծառայութեան: 1929-1931՝ Ասեմապետ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ: 1930-1934՝ տեսուչ Ս. Յարութեան Տանարին: 1934-1941՝ տեսուչ Բերդեհեմի Ս. Ծննդեան վանոց: 1940ին Նպիսկոպոսանալու արտօնութիւն կը ստանայ Միաբանական Ընդհանուր Ժողովէն, սակայն կարելի չըլլաւ իրագործել ժամանակներու աննպաստ բերումով: 1941-1951՝ տեսուչ Ս. Հրեշտակապետաց վանքին: 1944ին անդամ կ'ընտրուի Տնօրէն Ժողովոյ, որուն մէջ կը մնայ ցայսօր:

1951ին կը մեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր կը ստանայ Նպիսկոպոսական ձեռնադրութիւն՝ ձեռամբ երջանկայիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1956ին կ'ընտրուի Ընդհանուր Վարիչ Գործոց Ս. Արթուրյ. այս պատշոնը կը վարէ մինչեւ Տ. Տիրան Արեւպս. առաջին ախորհրդէն վերադարձը եւ Տեղապահ ընտրուիլը:

1957ին երբ Տ. Տիրան Արեւպս. Պատրիարք կ'ընտրուի, Տ. Սուրեն Նպս. կը ճշտակուի Պատրիարքական Փոխանորդ Ս. Արթուրյ: Ընտրեալ-Պատրիարքի երկրորդ ախորհրդէն յետոյ, Սուրեն Սրբազան կը վերահաստատուի իր Ընդհանուր Վարիչի պատշոնին մէջ:

ՍԻՈՆ Եւս ջերմօրէն կը շնորհաւորէ Սրբոց Յակոբեանց Ուխտի ամենէն տարեց եւ կորովի Սրբազանը՝ երբ կը ստանայ Արժուրեան բարձր պատիւը, որուն լիովին արժանի էր: